

Ղազարյանց համարատա 2ար-
շն գին վե շուկա իրքերի կին
լիքի բաղ օրումուր 1րդ.
Սեֆեյիկի պուրա իջին բեշին 60
կար ալյուր 35
Սեֆեյիկի բեշին բաշար իջին 85
կար ալյուր 45
Բոթա խմորի պիպե ալիա տիր.
90 դրուշուգ բոթա բուրու 80
դրուշա գապու օրումուր
15 կինիկար ճիւղակ 60 բր. տըր

ՄԵԶՄՈՒՄԻ

30 րարս

ԱԲՊԱՐ

30 րարս

باسمہ اخبار
بک اوغلی تقیم جادو نومبر 70

DIRECTION
DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera 65

Ղազարյան միջնակարգ խոստումով իշին ՅՈՒՆԵՍԿՈՒՄԻ թՈՒՄՅՈՒՆԱ միւրաճապ՝ օրումուր. — Խաղիկուն՝ Պէյդաճիւրա ճառարի վերջապէ ն. 65

ԱՍԻՔԱՆԷ 24 ՆՈՅԵՄԲԵՐ

ՄԱՅՐԱՊԵՐՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

ԶՈՐՍ ՄԱՅՐԱՊԵՐՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Յեղաշրջումը սկսաւ. Նորընտիր
կ-Պատրիարքն իբր Ջմաւոցի պիւղ-
պահապանական կը տեսնուի հան-
դէպ ազգային եկեղեցական արա-
թողութեանց և ծխոց:

Նշանակալից անօրինութեամբ մը
կիրակի օրն իր Աթոռանիստ եկե-
ղեցւոյն մէջ ծայրագոյն վարդապե-
տութեան ատարիճաններ տուաւ չորս
վարդապետներուն, որոնց երկուքն
Բորականապոլի աշակերտներէն են և
մնացած երկուքն Ջմաւոցեան:

Արեւելեան եկեղեցեաց մէջ Հայ-
կական եկեղեցին միայն բացառիկ
իրաւաստական արտօնութիւններ չնոր-
հած է Մայրապետ վարդապետնե-
րուն: Մեր Հայրապետը մասնաւոր
դուրքուրանք մը կը տածեն Մայրա-
պետ վարդապետութեան նկատմամբ,
մեր մէջ Մայրապետ վարդապետու-
թիւնն Եպիսկոպոսութենէն աւելի
զերապատու է: Ներսէս Շնորհալի,
Կաթողիկոսայի և Գրիգոր Տղայ Կաթո-
ղիկոս մեծ կարեւորութիւն տուած
են Մայրապետ վարդապետին: Կա-
թողիկոսէն անմիջապէս վերջ Մայ-
րապետ վարդապետին է կրօնի ու
սոցիալական պաշտօնը: Թեմական Եպիս-
կոպոսն իր հօտին Հովիւն ու Առաջ-
նորդն է: Մայրապետ վարդապետը
սակայն կրօնի Ուսուցիչն է: Եպիսկո-
պոսը կը հովուէ, իսկ Մայրապետն
վարդապետը կը քարոզէ, ի պաշտօ-
նէ Աւետարանի, Ս. Գրոց և Աւան-
դութեան մեկնիչն է: Տաթևացին
աւելի պահանջլիւս է, որուն կարծ-
եաց համաձայն Եպիսկոպոսն ու Մայ-
րապետն վարդապետն եկեղեցւոյ մէջ
միեւնոյն ժամանակ գտնուած միջոց-
նին նախ Մայրապետ վարդապետը
քարոզելու իրաւունք ունի: Ի պատ-
մութենէ զիտենք թէ հին ատեն ա-
մէն Եպիսկոպոս Մայրապետ վարդա-
պետ չէր և չառ քիչեր այս մեծ և
աւագ պատուին արժանացած են:
Նոյա՛ւ ալ է ժամանակամիջոց մը, յո-
րում Մայրապետ վարդապետներ հայ
եկեղեցին կառավարած են և ըստ
կամ պաշտօնանկ ըլլած Կաթողիկոս-
ներ և Թեմականներ:

— Ժամանակէ մ'ի վեր մեր մէջ
վարդապետական իրաւունքներ իրան
գտնուած են(1): Հայ եկեղեցին եր-

կու տեսակ վարդապետական աստի-
ճան ունի. հաւատալի և ծայրագոյն
վարդապետ: Հաստատակ վարդապետ-
ները 1. միայն վեղար կրնան դոր-
ժած ել: 2. ուրիշ վարդապետի մը
վարդապետական դաւադան և իշխա-
նութիւն չեն կրնար տալ: 3. չեն
կրնար եկեղեցւոյ մէջ նստելով քա-
րոզել և ոչ ալ 4. գաւազանաւ խը-
րատակներ խօսել: — Մայրապետն
վարդապետները 1. վեղար և ծաղ-
կեայ փերն կը կրնն, 2. եկեղեցւոյ
մէջ նստապատու են, 3. ուրիշի մը
կրնան վարդապետական աստիճան-
ներ չնորհել: 4. միայն վարդապե-
տական դաւադան ի ձեռին և Աթո-
ռոյ վրայ բազմած պիտի քարոզեն:
5. Սինհոգոսներու մէջ ոչ Մայրա-
պետ վարդապետ եղող Եպիսկոպոս-
ներէն յառաջ պիտի խօսին(1):

Հայ եկեղեցին Մայրապետ վար-
դապետներուն վերապահած կանո-
նական իրաւաստութիւնները շատ հին
ծաղում մ'ունին: Փիտրոս Կարդինալ,
որ հին եկեղեցւոյ կանոնական իրա-
ւունքները պրոպոստ և ուսումնասի-
րած է, մինչև եկեղեցւոյ առջի և
երկրորդ դարն ետ կ'երթայ դըռ-
ներու համար Մայրապետ վարդա-
պետներու յատուկ իրաւաստակա ար-
տօնութիւնները: Իր *Spicilegio Soles-
mente* աշխատասիրութիւններուն մէջ
Մայրապետ վարդապետին սահմանը
տուած ժամանակ, Մայրապետն բառը
կը թարգմանէ «*Omnium doctrina-
rum curiosus doctor*»: Migne Գա-
հանայն և Mohler Գերմանացին, ու-
րոնք եկեղեցական հայրախօսութեան
ամենէն պերճաւոր և զիտուն հե-
ղինակներէն են, առաքելական ծա-
ղում կուտան Մայրապետ վարդա-
պետներու յատուկ իրաւաստութիւն-
ներուն: *Gouilloud* Գաղղիացին(2) ա-
ւելի յառաջ երթալով կը պնդէ թէ
Առաքելոց մէջ միայն Պաւլոս Առաք-
եալն էր Մայրապետ վարդապետ,
ամէն ժողովոց մէջ Պաւլոս միայն կը
քարոզէր: Առջի և վերջին խօսքը
Պաւլոսին էր: Առաքելոց Գաւառն
մեկնիչն ու հաւատը Պաւլոսն էր:
Կնճռոտ վիճարանութեանց Պաւլոս
միայն ներկայ կը գտնուէր:

— Անշուշտ այս էր պատճառն որ
նորընտիր Կաթողիկոսն մասնաւոր
հոգածութեամբ և ուղղակի իր ա-
րարողապետութեանը ներքեւ ծայ-
րագոյն վարդապետութիւն չնորհեց(1)

(1) Մատնիկն եւ Կաթողիկոս, վերջին
ժամանակներու դեռտեր են:

(2) *Steu Ste Irénée et son temps*,
Lyon 1876:

և զեղեցիկ սկզբնաւորութեան մը
ճնունդ տուաւ: Իր հանգուցեալ
նախորդը պարզապէս Մատնիկ և
Կնճռակ մը չնորհելով Մայրապետնե-
թիւն կը չնորհէր, Նորընտիրը սա-
կայն տարեր կը խորհի: մաղթենք
որ այս հին սովորոյթը նորէն իր առ-
ջի պատկաւելի դարձաւ որ ընդթը
ստանայ և սովորութեան կարգն անց-
նի: Մեր եկեղեցին ողին ու աւան-
դութիւնն ալ զայն կը պահանջեն:
ՅՈՒՆ. Յ. ԱՆԱՆ
(Շարունակելի)

ՈՒՐ Է ԵՐԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Տէր,
Մօտերս ձեռքս գրքոյ մը անցաւ «Հա-
ւաքածոյ ընտիր գրութեան» Պ. Սիմոն Գա-
բուանեանի, այդ գրքին մէջ կարդացի Ար.
Զ. . . ի, «Երջանկութիւնը» վերապրով
ոտանաւորը եւ զարգացի, եւ կարծեմ թէ ա-
մէն բարի սիրտ ունեցողները պէտք են դո-
ղալ. այդ ոտանաւորը Աստուծոյ դէմ հայ-
հոգութիւնն մըն է: Ես զարմացայ թէ ինչ-
պէս այդ ոտանաւորն հաւանք է Պ. Գաբա-
նեանի, Հաւաքածոյ գիրքը փունջ մըն է
բանաստեղծութեան ծաղիկներով շինուած:
Ինչ ճաշակով ընտրել Պ. Զ. . . ի ոտա-
նաւորը, որ ըստ իս բանաստեղծութեան մո-
լախիքն է. այդպիսի փունջ չըբարբոր խո-
րանի վրայ եւ ոչ ալ մանկանց օրաի թա-
ղարին մէջ:

Ուրբ նախանձով զրիչս առի, ես ալ
սկսայ, ես ալ փորձեցի գրել երջանկու-
թեան վրայ, յաջողեցայ արդեօք, կիցա՞յ
սիրտս արարել, չեմ գիտեր. ես բանաս-
տեղծ չեմ, բայց Աստուծոյ փառաց համար,
Աստուծոյ սիրուն համար կ'ազգչեմ այդ
եւ Պ. Զ. . . ի գրածը հրատարակելիք
ձեռ թերթին մէջ:

ԵՐԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բազմաբնուէր ժըխտին մէջ անվախճան,
Երջանկութիւնը փնտռել ձանձրացած,
Ես դուրս ելայ խաժամութիւն մարդկութեան
Եւ կեանքի մեծ սարսափունքն ընթացած:
Բնութեան թիւր թիւր ներգաշնակ ծայ-
ներուն,

Ըսի իմ ցաւս եւ հարցուցի, «Ե՛ր է պն»,
Եւ պատասխան տուին ձայներն ինձ անհուն,
«Մենք այդ ըստուերը չը ճանչցանք յաւի-
տեան»:

Վեր ելայցած, տափակ, ռափիկ դաշտերէն,
Եւ ըսի, «Լեւն անշուշտ զիտէ բոյն անոր»,
Բայց ինձ ճաղատ հսկան ըսաւ արտօրէն,
«Ես լսի ձանձրոյթը և ճանչնամ լայն ու
խոր»:

(1) Մայրապետ վարդապետութիւնը տասն
աստիճան ունի, որոնց ստջի երկուքն եւ
վերջին երեք աստիճանները յատկին Ս.
բնիկ կը արժեն, եւ միացածները եկեղեց-
ւոյ չորս կողմերը:

Հին ատեններ Կաթողիկոսները այսպի-
սի հանդէսներու մէջ միշտ յատենի Ս. Տա-
ճարի մը բազմէին:

Բողոցի լեռն ու հովերուն մօտեցայ,
Սաւառնաթիւ էակներուն երջանիկ.
Բայց ինձ ըսին, «Մենք հառաչանքն ենք
հսկայ
Յաւերու որք պիտի մընան ձեզ զաղտնիք»:
Ամպերէն վեր, անհունին մէջ ամսոյի:
Տեսայ Աստուած, որ թաղծագին կը խորհէր,
«Երջանկութիւնն ո՛ւր է, ո՛ր է» գաչելի,
Եւ Տէրն ինձի պատասխանեց. «Ձե՛մ գիտե՛ր»:
Ա. Զ. . .

ԵՐԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Սըրտիկս ի վիշտ անցուց չա՛տ օր, չա՛տ
ժամեր,
Կարօտ սիրոյ, երջանկութեան ծարաւի,
Միշտ հառաչանք, միշտ արտասուք կը թա-
փէր,

Ո՛ր այն աղբիւր որ սրտիս մէջ ծաւալի:
Տեսայ ծագիկ մ'որ կը բուրէր անուշիկ,
Թրչնիկ կ'երգէր տերեւներու մէջ դաւար,
Մին դարձած էր դէպ արշալոյս, եւ ծաղիկ
Ջեփիւռներու գրկի կ'որոյրէր անգարսոյ:

Բայց ես տխուր թափառէի ծովեզերք,
Մինչ իմ սիրտս ալ էր մի մեծ ծով ալեկոծ:
Ուր մէկ մ'ալիք էին սիրոյ մէջ մի վէրք,
Աւելի՛ խոր, ովկէան մը, բայց ցաւո՞ց. . .

Ինձ արշալոյսն ու լուսնեկայ խօսք տուին
Առաջնորդել թէ՛ առաւօտ, թէ՛ գիշեր:
Լեռներ կանգնած զինչ սիւնք երկնից կա-
մարին

Ըսին. «Սանդուխ ըլլանք քեզի, ելի՛ր վեր»:
Ելայ. . . ո՛հ, երբ հեռու երկրէ, մօտ երկնի
Կուլայի, մին սրբեց արցունքն իմ աչաց,
«Ազօթքն, ըսաւ, երջանկութեան է ուղի,
Երջանկութեան ծայր ու ծրարն է Աս-
տուած»:
ԲԱՆԱՆԱՆ ՄԸ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՌԻՆԸ

Տէր,

Ձեր պատուական թերթին անցեալ շա-
բաթ օրուան թուոյն մէջ՝ Ուսումնարանին
նախկին աշակերտներէն Եւրոպա գացողնե-
րուն հանգամանացը վերաբերեալ հրատա-
րակութիւնը, ինչպէս նախընթացն ալ,
կարդացուեցան անշուշտ հաճութեամբ չո-
լոր ուսումնասէր պատուական ազգային-
ներուն կողմանէ: Յիշեալ աշակերտներէն
Գրիգոր Աբակեան տաղանդաւոր պատանին,
որ բժշկութիւն կը սորվի, իրեն յատկա-
ցուած ուսարեկան թոշակին պակասը լեցնե-
լու համար, լատիներէնի մասնաւոր դա-
սեր կուտայ եւ սոյն ինքուն աղջկանց երկ-
րորդական վարժարանի մը մէջ ալ կը սո-
վեցնէ: Լսե՛ն անոնք որ չեն դադարի կրկ-
նել թէ լատիներէնը բոլորովին անօգուտ
ուսում մըն է, եւ ամէն բան հացի նիւթա-
կան խնդրոյ մը կը վերածեն, մոռնալով Ա-
ւետարանին խօսքն թէ «Ոչ միայն հօցլւ
կեցցէ մարդ»:

Աբակեանին օրինակը պերճախօս ապա-
ցոյց մըն է, եթէ ապացոյցի պէտք կար, թէ
լատիներէնը հաց ալ կուտայ մարդու:

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի
Բերա 23)5 Դեկտեմբեր 1890

(1) Տես Պատկեր Հանգիս կիսամեակ,
Թիւ 3:

Քանդակութիւն, 20 նոյեմբեր 1899

ՀԻՄՆԱԼ ՎԵ՛ ՎԱԾԻԳՈՒՆ.

— Մուհիմմաթը հարպիէնի վէ
աստքերի համիւ պիւ ինկ. նազլիէ
վարօրը՝ Սէնթ-Էէնէ տօնիւնտէ պաթ-
մըշ տըր: Եօլճուլար դուրժարը մը
արդ:

